ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Կադաստրի կոմիտեի կողմից 2019 թվականին կատարված հիմնական աշխատանքների արդյունքների վերաբերյալ

Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), լինելով պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների (սահմանափակումների) ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը ապահովող մարմին, միաժամանակ իրականացնում է տեղեկատվական համակարգի ստեղծումն ու կառավարումը: Կադաստրի տեղեկատվական բանկը հանրապետության կարևորագույն հանրային ռեեստրներից մեկն է. այն ոչ միայն հանրությանն է ապահովում անշարժ գույքի, դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների (աշխատանքներ են իրականացվում նաև հասցեավորման ուղղությամբ), հանրապետության հողային ֆոնդի և քարտեզագրագեոդեզիական տվյալների վերաբերյալ տեղեկատվությամբ, այլև կարևոր և անփոխարինելի տեղեկատվական հիմք է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման գրեթե բոլոր մակարդակներում ինչպես համապետական նշանակության, այնպես էլ առանձին գերատեսչական շահերից վեր կանգնած բազմաթիվ տնտեսական և կառավարչական նշանակության որոշումների ընդունման համար:

1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում

Կոմիտեի տարածքային ստորաբաժանումների կողմից 2019 թվականի 11 ամիսների ընթացքում իրականացվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների շուրջ 167’370 պետական գրանցում, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ աճել է 13.8 %-ով: Ընդհանուր առմամբ իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման վերաբերյալ սպասարկման գրասենյակների կողմից ընդունվել է շուրջ 621’548 դիմում, որը նախորդ տարվա համեմատ աճել է 30 %-ով: Կայքէջում ներդրված էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ է մուտքագրվել առցանց ստացված ևս 2’181 դիմում: Սպասարկման գրասենյակների կողմից ստորագրությունների իսկության ճանաչմամբ անվճար կնքվել է 21’513 պայմանագիր: Բացի այդ՝ նոտարների կողմից ընդունվել է իրավունքների գրանցման և տեղեկատվության տրամադրման 44’386 դիմում, ՀՀ բանկերի կողմից՝ 9’412 դիմում:

Կոմիտեի տեքստային տվյալների բազայում սուբյեկտների տվյալների ճշգրտման և ամբողջականացման աշխատանքների (շուրջ 1’ 700’ 000 սուբյեկտ) շրջանակում ՀՀ Վայոց ձորի և ՀՀ Արագածոտնի մարզերում գտնվող անշարժ գույքերի մասով առաջին փուլով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են: Ընթացքի մեջ են ՀՀ Արմավիրի մարզում իրականացվող աշխատանքները, որոնք, ըստ նախնական տվյալների, կավարտվեն 2020 թվականի փետրվար ամսին:

Կոմիտեի «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել են դասընթացներ ինչպես Կոմիտեի մասնագետների, այնպես էլ համակարգում չաշխատող անձանց (այդ թվում՝ բանկերի աշխատակիցների) վերապատրաստման համար, և նրանց

տրամադրվել է դասընթացներին մասնակցելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ: Կոմիտեի կողմից հաշվետու ժամանակահատվածում անշարժ գույքի գնահատողի, ինչպես նաև քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) ու հողաշինարարության գործունեությամբ զբաղվելու որակավորման վկայական է տրվել 37 դիմողի:

2. Քաղաքացիների սպասարկում

Համակարգում շարունակվել է պաշտոնական կայքում (e-cadastre.am) դիմումների ընթացքի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության տրամադրման ապահովումը՝ քաղաքացիների կողմից ավարտական փաստաթուղթը (վկայական, տեղեկանք, կասեցում, մերժում և այլն) դիտելու, ներբեռնելու և տպելու հնարավորությամբ: Տեղեկատվություն է տրամադրվել քաղաքացիներին նաև առցանց ինքնաշխատ եղանակով, որի դեպքում հարցումը կատարելուց հետո տեղեկատվությունը տրամադրվել է անմիջապես: Որոշ սպասարկման գրասենյակներում տեղադրված էկրանների օգնությամբ պարբերաբար ցուցադրվում են գրասենյակի, ինչպես նաև Կոմիտեի գործառույթներին վերաբերող և քաղաքացիներին ուղղորդող կարճ տեսահոլովակների նորացված տարբերակներ: 2019 թվականից Կոմիտեի «Արաբկիր» սպասարկման գրասենյակը աշխատում է նաև շաբաթ օրերին՝ ժամը 9:00-18:00-ը: Բոլոր սպասարկման գրասենյակները աշխատում են առանց ընդմիջման ժամերի, իսկ նախատոնական օրերին մինչև ժամը 18:00-ը աշխատում են Կոմիտեի «Արաբկիր», «Կենտրոն», «Շենգավիթ», «Աշտարակ», «Վաղարշապատ», «Արմավիր», «Արտաշատ», «Մասիս», «Մարտունի», «Գավառ», «Սևան», «Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Եղվարդ», «Գյումրի», «Արթիկ», «Կապան», «Գորիս», «Եղեգնաձոր» և «Իջևան» սպասարկման գրասենյակները՝ նախօրոք սահմանված հերթափոխով:

Պարբերաբար իրականացվում է քաղաքացիների կողմից անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների, ինչպես նաև տեղեկատվության տրամադրմանն առնչվող «Թեժ գծի» միջոցով բարձրացված խնդիրների, հարցումների արձագանքում, և տրամադրվում է խորհրդատվություն, որոշ դեպքերում՝ համապատասխան լուծումներ:

3. Հաշվառման և հողաշինարարության բնագավառ

ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման, ինչպես նաև ոռոգվող հողերի հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ տարվա հաշվետվությունը (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների)՝ նաև համայնքների կտրվածքով, տեղադրվել է Կոմիտեի cadastre.am պաշտոնական կայքէջում:

4. Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառ

ՀՀ պետական բյուջեի ծախսային ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվել են գեոդեզիայի, երկրատեղեկատվական համակարգի ստեղծման, աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման ուղղություններով, մասնավորապես ՀՀ բազային երկրատեղեկատվական համակարգի՝ Վաղարշապատ քաղաքի քարտեզագրական հիմքի, Հայաստանի ազգային ատլասի (1 հատորով) ռուսերեն տարբերակի ստեղծման, ՀՀ աշխարհագրական անվանումների քարտադարանի վարման, Հարավային և Հյուսիսային Ամերիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատուի մշակման:

Իրականացվել են նաև ՀՀ Տավուշի մարզի անվանակոչված աշխարհագրական օբյեկտների անվանումների հավաքագրման աշխատանքներ:

5. Անշարժ գույքի շուկայի վերլուծություն և գնահատում

Իրականացվել են գնահատման ոլորտի ընդլայնման, բարելավման և ինքնակարգավորման ուղղությամբ մի շարք քայլեր: Տեղի են ունեցել հանդիպումներ և քննարկումներ բոլոր գնահատողների, ինչպես նաև գնահատողների շահերը ներկայացնող մի քանի կազմակերպությունների հետ: Անշարժ գույքի շուկայի զարգացման վերլուծության ուղղությամբ մշակվել և առանձնացվել են վերլուծության համար անհրաժեշտ բազաները, անցկացվել են հանդիպումներ և քննարկումներ ոլորտի մասնագետների հետ: Ստեղծվել են նախադրյալներ 2019 թվականին վերլուծությունը իրականացնելու համար:

2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալների հիման վրա ձևավորվել են ՀՀ համայնքների ու բնակավայրերի գույքահարկի և հողի հարկի 2020-2022 թվականների բազաները, որոնք սահմանված կարգով մինչև 2019 թվականի սեպտեմբերի 1-ը տեղադրվել են Կոմիտեի պաշտոնական կայքէջում, որը հնարավորություն կնձեռի ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին հաշվառելու և իրականացնելու գույքահարկի ու հողի հարկի գանձումը:

Մշակվել է և ՀՀ Ազգային ժողովի կողմից 2019 թվականի նոյեմբերի 19-ին ընդունվել է «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՕ-225-Ն ՀՀ օրենք (ուժի մեջ է մտնում 01.01.2021 թ.):

6. Կառուցվածքային բարեփոխումներ

ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի «ՀՀ կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1030-Լ և 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշումներով նախատեսված միջոցառումների ծրագրին համապատասխան՝ 2018 թվականին կադաստրի համակարգի 3 տարածքային ստորաբաժանումներ միաձուլման ձևով վերակազմակերպվել են մեկ ստորաբաժանման, որի գործառույթները 2019 թվականին պետք է տարանջատվեին 3 հիմնական մասնագիտացված ուղղությունների, տեղակայումը տարբեր հասցեներում և նույնիսկ տարբեր քաղաքներում, ինչը ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման հետ կնպաստեր կոռուպցիոն հնարավոր ռիսկերի բացառմանը, ինչպես նաև մարզերում աշխատուժի

համաչափ տեղաբաշխմանը: Տվյալ գործառույթը ծրագրով նախատեսվել է ավարտել մինչև 2022 թվականը, սակայն Կոմիտեի չորս տարածքային ստորաբաժանումների միավորման արդյունքում գործառնական՝ տարածական տվյալների կառավարման, կադաստրային գործերի (արխիվի) համար նախատեսված նոր ստորաբաժանումների ստեղծման աշխատանքները ներկայումս դադարեցվել են՝ դրանց ստեղծման նպատակահարմարության հարցը որոշելու նպատակով:

7. Այլ պետական մարմինների հետ տեղեկատվության առցանց փոխանակում

Հաշվետու ժամանակահատվածում համակարգում շարունակվել են աշխատանքները այլ պետական մարմինների հետ տվյալների փոխանակման, օպերատիվության բարձրացման, պահանջվող փաստաթղթերի ցանկի կրճատման, աշխատակիցների ծանրաբեռնվածության նվազեցման ուղղությամբ: Ներկայումս Կոմիտեն առցանց տեղեկատվություն է ստանում հետևյալ պետական մարմիններից՝ Ոստիկանությունից (Բնակչության պետական ռեգիստր), Արդարադատության նախարարությունից (Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստր), Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից («Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն» ՓԲԸ), և տեղեկատվություն է տրամադրում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին, Կենտրոնական բանկին, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, Քննչական կոմիտեին, Ազգային անվտանգության ծառայությանը: Տվյալ ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Ներկայումս փորձարկման փուլում են ԴԱՀԿ-ի կողմից ներկայացվող սահմանափակումների կիրառման և վերացման որոշումների բազայի կապակցումը անշարժ գույքի տեղեկատվական համակարգին, ինչպես նաև իրավունքների գրանցման վերաբերյալ տեղեկատվությունը Պետական եկամուտների կոմիտեին առցանց հասանելի դարձնելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում ներդրվել է սերվերային համակարգ, էլեկտրոնային համակարգերի և համակարգերի մատակարարման ցանցային ենթակառուցվածքների ներքին և արտաքին մշտադիտարկման, սինթետիկ թեստավորման, կենտրոնացված տեղեկամատյանների պահպանման և վերլուծման համակարգ:

Կոմիտեի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման կողմից ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվել է գույքի ու դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ 13’836 գրություն՝ 194’377 անձի վերաբերյալ, որի աճը 2018 թվականի համեմատ կազմում է համապատասխանաբար 37 % և 815 %, քաղաքացիներին ու կազմակերպություններին տրամադրվել է գույքի ու դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ 31’968 դիմումի պատասխան՝ 36’840 անձի վերաբերյալ, որի աճը 2018 թվականի համեմատ կազմում է համապատասխանաբար 72 % և 56 %, նույն ժամանակահատվածում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից մուտքագրված գույքային իրավունքների սահմանափակումների ու դրանց վերացման վերաբերյալ շուրջ 305’184 որոշումներ, որոնք նվազել են 8 %-ով: Տրամադրվել է նաև քարտեզագրական նյութերի 26’676

հարցումների վերաբերյալ տեղեկատվություն, որի աճը 2018 թվականի համեմատ կազմում է 67 %:

Կոմիտե մուտքագրվել է 1’495 դիմում-բողոք: Կոմիտեի ղեկավարի ու ղեկավարի տեղակալների կողմից յուրաքանչյուր երկուշաբթի անցկացվող ընդունելություններին մասնակցել է 359 անձ (2018 թվականի համեմատ նվազել է 22-ով): Կոմիտեի 2019 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման վերաբերյալ պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության և որոշումների վերաբերյալ վերադասության կարգով ներկայացված բողոքների քննարկման կարգը հաստատելու մասին» N 110-Լ հրամանի պահանջների համաձայն՝ տեղի է ունեցել 5 վերադասության նիստ, որոնց ընթացքում քննվել են 16 քաղաքացիների գործեր:

8. Մուտքագրված գումարներ և կատարված ծախսեր

Կոմիտեի ստորաբաժանումների կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման գծով փաստացի եկամուտը կազմել է 5’033’755’562.0 դրամ (2018 թվականի համեմատ եկամուտը աճել է 752’109’485.0 դրամով կամ 17.6 %-ով):

Կոմիտեի 2019 թվականի տարեկան բյուջեն նախատեսվել է 3’991’159’800.0 դրամ, փաստացի ծախսը կազմել է 3’715’268’528.9 դրամ կամ նախատեսվածի 93.1 %-ը: Եկամուտների և ծախսերի դրական տարբերությունը (որը օրենքի պահանջների համաձայն փոխանցվում է պետական բյուջե) կազմել է 1’318’487.033 դրամ, որն ավել է նախորդ տարվա նույն ցուցանիշից 145.1 %-ով:

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքի գծով 2019 թվականին նախատեսվել է 971’515’200.0 դրամ, փաստացի գանձվել է 1’148’078’781.0 դրամ, որը նախատեսվածից ավել է 176’563’581.0 դրամով կամ 16.8 %-ով (2018 թվականի համեմատ աճել է 18.2 %-ով):

Պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների տրամադրման համար անցկացվող քննություններից և տրամադրվող վկայականներից մուտքերը նախատեսվել են 720’000.0 դրամի չափով, փաստացի մուտքը կազմել է 1'136'000 դրամ, որը նախատեսվածից ավել է 57.8 %-ով:

9. Օրենսդրական նախաձեռնություններ

ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ, 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշումներով հաստատված 5-ամյա միջոցառումների ծրագրի պահանջներից ելնելով՝ Կոմիտեի կողմից մշակվել և իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, այսպես՝ ինտեգրված (միասնական) կադաստրի ստեղծմանն ուղղված հայեցակարգ (ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի N 672-Լ որոշում), հասցեների միասնական ռեգիստրի ստեղծման հայեցակարգ (ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի N 553-Լ որոշում), կադաստրի համակարգի կողմից դիմողներին տրվող ավարտական

փաստաթղթերում կնիքի վերացման, ինչպես նաև մի շարք հրատապ հարցերի կարգավորման նպատակով նախատեսված փոփոխություններ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում (2019 թվականի հուլիսի 1-ի «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-105-Ն ՀՀ օրենք, 2019 թվականի հուլիսի 1-ի «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-107-Ն ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի N 1487-Ն որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N 1601-Ն որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N 1586-Ն որոշում) և այլն:

10. Մասնակցություն դատական գործերի քննությանը

Կոմիտեի աշխատակիցները ՀՀ տարբեր ատյանի դատարաններում 2019 թվականի ընթացքում մասնակցել են 1’418 քաղաքացիական և վարչական գործերի քննությանը, որի արդյունքում դատարանների կողմից կայացվել են 567 վճիռ և որոշում: Կայացված 567 վճիռներից և որոշումներից մերժվել և կարճվել են 412-ը և բավարարվել 155-ը:

11. Միջազգային համագործակցություն

Կոմիտեն փոխշահավետ համագործակցային կապերի ստեղծման և զարգացման նպատակով կազմակերպել է քննարկումներ և հանդիպումներ գործընկեր պետությունների՝ ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների, միջազգային համագործակցության գրասենյակների, միջազգային կառույցների և կազմակերպությունների, մասնավորապես Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Չեխիայի Հանրապետության, Չինաստանի, Ճապոնիայի, Լիտվայի դեսպանների, Լեհաստանի դեսպանության, ՄԱԶԾ-ի (UNDP), Շվեյցարիայի զարգացման գործակալության (SDC), Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության ներկայացուցիչների հետ:

Վերսկսվել են համագործակցությունը և պարբերական աշխատանքները ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE), ՄԱԿ-ի աշխարհագրական անվանումների փորձագետների խմբի (UNGEGN), ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի (UNGGIM) հետ:

Համագործակցային կապեր են հաստատվել մի շարք նոր գործընկերների, մասնավորապես Նիդեռլանդների Թագավորության կադաստրի հետ:

Հանդիպումների և քննարկումների արդյունքում միջազգային գործընկերներին ներկայացվել են համագործակցության ուղղությունների և նախագծային առաջարկների փաթեթներ, մասնավորապես՝

Ֆրանսիա - անօդաչու թռչող սարքերի պարկի ստեղծում օդալուսանկարահանման, տեղագրական և կադաստրային հանութագրման, օրթոֆոտոհատակագծերի ստեղծման համար, օդալուսանկարահանման պրոֆեսիոնալ սարքավորումների, նկարահանող սարքերի և աքսեսուարների տրամադրում, մասնագետների վերապատրաստում IGN-ում,

օդալուսանկարների վերծանման լաբորատորիայի տեխնիկական և ծրագրային վերազինում, լաբորատոր աշխատանքների արտապատվիրակում հայկական կողմին:

Գերմանիա - հողային հարաբերությունների կարգավորումների պարզեցում:

Նիդեռլանդների Թագավորություն - արխիվների թվայնացման ուղղությամբ համալիր փորձագիտական աջակցության տրամադրում, մասնագետների վերապատրաստում:

Լեհաստան - գրասենյակների կահավորում, տեխնիկական հագեցվածության ապահովում, քաղաքացիների սպասարկման ու մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, համապատասխանեցում եվրոպական չափանիշներին, ուսուցում:

Չինաստան - Կոմիտեի «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի կազմում Հեռահար զոնդավորման կենտրոնի (Remote Sensing Center) ստեղծում, նյութատեխնիկական բազայի համալրման համար անհրաժեշտ սարքավորումների տրամադրում, մասնագետների վերապատրաստում:

ԵՄ - «Թայեքս» գործիքի միջոցով արխիվների թվայնացման փորձի տրամադրում Կոմիտեին: Ծրագիրը հաստատվել է ԵՄ-ի կողմից: Ներկայումս ընթացքում են առաքելության կազմակերպման ժամկետների և կազմակերպչական մանրամասների վերաբերյալ քննարկումները:

Ճապոնիա - ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի հայեցակարգի և օրենսդրական նորմերի, տվյալների ստեղծման և պահպանման ստանդարտների, մետատվյալների ստանդարտների մշակման որակի գնահատում, կիրառման մեթոդաբանության մշակում, գիտատեխնիկական աջակցություն Գեոպորտալի ստեղծման աշխատանքներում:

Նորվեգիայի Թագավորություն - ներկայացվել է Ինտեգրված կադաստրի շրջանակներում ստեղծվելիք «Տվյալների կենտրոնի» համատեղ ստեղծման նախագծային առաջարկ:

Կոմիտեն պատասխանատու ուղղություններով ապահովել է Կոմիտեի ղեկավարի մասնակցությունը մի շարք կարևոր միջազգային հանդիպումներին, ինչպիսիք են Շվեյցարիայում կայացած UNECE WPLA 11-րդ նիստը, ԱՄՆ-ում կայացած «Esri» օգտատերերի համաժողովը:

Կոմիտեն ազգային անդամի կարգավիճակով անդամակցել է Քարտեզագրության միջազգային ասոցիացիային:

Շարունակվել են աշխատանքները Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում ՀՀ դիրքի բարելավման նպատակով միջազգային փորձի ուսումնասիրման, առաջարկությունների և անհրաժեշտ տեղեկատվության պարբերաբար տրամադրման ուղղությամբ:

Կոմիտեն կազմակերպել, ապահովել, մասնակցել է մի շարք միջոցառումների, ինչպիսիք են՝ հանդիպումներ Հայաստան ժամանած ԵՄ SIGMA նախաձեռնության փորձագետների հետ, մասնակցություն Չեխիայի Հանրապետության մայրաքաղաք Պրահայում «Եվրոգեոգրաֆիքս» կազմակերպության գլխավոր համաժողովին, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի

տարածաշրջանային գրասենյակի 11-րդ միջազգային LANDNET աշխատաժողովին՝ նվիրված հողերի կոնսոլիդացմանն առնչվող խնդիրներին, և այլ միջոցառումներ:

12. Հանրային կապեր

Կոմիտեի պաշտոնական կայքում տեղադրվել է 117 իրադարձային նորություն, «Ֆեյսբուքի» էջում՝ 460 միավոր (մեծ մասը՝ Կոմիտեի գործունեությունը լուսաբանող տեղեկություններ), շարունակվել են հատուկ շարքերը՝ #ՆորԿադաստր, #Կադաստրը ձեզ համար, #Դասընթաց, #ՆորԿադաստր-Միջազգային, #Մերոնք, #Ուրախ կադաստր … հաշթեգերով: «Ֆեյսբուքի» հավանումների թիվը հասել է ավելի քան 8 հազարի (էջը բացվել է 2018 թվականի սեպտեմբերին): «Թվիթերի» լսարանին հետաքրքիր նյութերն ընտրվում և տարածվում են այդ սոցիալական ցանցի՝ Կադաստրի էջով: Կոմիտեն իր էջն ունի նաև «Ինսթագրամում»:

Կազմակերպվել է Կոմիտեի ղեկավարի հյուրընկալումը Factor TV-ի հաղորդմանը՝ գույքի հարկման բազայի, Ինտեգրված կադաստրի, հասցեների միասնական ռեեստրի ստեղծման, Կոմիտեի այլ ծրագրերի թեմաներով:

Լրատվամիջոցների նախաձեռնությամբ կազմակերպվել են հարցազրույցներ Հ1-ի «Լուրեր»-ի, «Հրապարակում» հաղորդաշարի (փետրվարին՝ անշարժ գույքի գործարքների աճ, հունիսին՝ Ինտեգրված կադաստր, անշարժ գույքի հարկման բազայի սահմանում), «Հայաստանի Հանրապետություն», «Ռեսպուբլիկա Արմենիա», «Գոլոս Արմենիի» (անշարժ գույքի հարկման բազայի սահմանում), «Հայկական ժամանակ» (անշարժ գույքի շուկայում գործարքների և գների աճ), «Հրապարակ» (կառավարության շենքում ճեպազրույց՝ Քաղաքաշինության կոմիտեի հետ «հակասությունների» մասին), «EVNReport» (գերակա հանրային շահ և սեփականության իրավունք) թերթերի համար:

Լրատվամիջոցների նախաձեռնությամբ կազմակերպվել են նաև Հ1-ի «Մեկ պատուհան» հաղորդաշարի, «Ար»-ի «Սուրհանդակ»-ի և «Արմենիայի» «Սուր անկյուն» հաղորդաշարի համար Կոմիտեի ղեկավարի տեղակալների և համակարգի մասնագետների պարբերական հարցազրույցներ:

Մշակվել, կազմակերպվել և ավարտվել են Կոմիտեի 3 թեմատիկ տեսահոլովակների նկարահանման աշխատանքները՝

- «Կադաստրի կոմիտեի առօրյա գործը»,
- «Կադաստրի կոմիտեի հավակնոտ բարեփոխումները»,
- «Կադաստր. առուվաճառք, նվիրատվություն, վարձակալություն»:

2019 թվականի ընթացքում զանգվածային լրատվամիջոցների և սոցիալական մեդիայի միջոցով իրականացվել է 700-ից ավելի հանրային իրազեկում: Մշակվել է Կոմիտեի նոր տարբերանշանն ու ոճային ուղեցույցը, որի շրջանակում իրականացվելու են հաղորդակցության ու ձևավորման հետագա բոլոր աշխատանքները: Առաջին անգամվա համար սոցիալական ցանցերում մասնավորապես Facebook, Twitter, YouTube և Linkedin բացվել են էջեր, որտեղ թարգմանվում ու տարածվում են հայերեն ու անգլերեն գրառումներ: Միաժամանակ դրանք ծառայում են որպես դժգոհությունների, առաջարկությունների ու հարցերի անմիջական առաջադրման հարթակ: